



Վահան Թոթովեց

Ներման աղոթքը

Ա

Երբ դեռ մանուկ էի՝ շատ եկեղեցասեր ու ջերմեռանդ էի: Իմ քրիստոնյա և աստվածավախ մայրս այնպես դաստիարակած էր:

Գիշեր ու ցորեկ զրուցած էր ինձ՝ կապույտը ցուցնելով:

Վերը, ամպերու ետին, ճիշտ աստղերուն քովիկը, Աստված կա, որ մեզ կը դիտե, ինչ որ ընենք և զրուցենք՝ կը տեսնե և կը լսե. ա՛յ, վերն է, վերը... Ղուրապան ըլիս զորությանը, և կը խաչակնքեր, որուն կը հետևեի:

Կազդեին ինձ մորս ըսածները, որովհետև անկեղծ մայրիկ էր: Թեև չէի տեսներ այդ Աստվածը, բայց չէի ալ հարցներ. «Ապա ո՞ւր է, մայրի՞կ, չես տեսներ», որովհետև կապույտին մեջ վեհություն մը կար, աստղերը այնպիսի հանդիսավորություն մ'ունեին, որ կը զգայի թե բան մը կար, քաղցր սարսուն մը կը բռներ կը կենար, հոգիս կը թռչեր, կը թռչեր...

Ամեն առավոտ մութն ու լուսուն մայրիկիս հետ ժամ կերթայի, որ ատեն միայն ժամկոչը կը լլար ին: Մայրս վերնատունը չէր երթար, ձեռքս բռնած կուզար դասը և Մայրիկ Աստվածածնա պատկերին առջև կաղոթեր: Մոմը, որ կը պլայլար այդ յուղու և դժգույն պատկերին առջև՝ երերուն ստվեր մը կը ձգեր շուրջը. քախծություն էր ու քաղցրություն...

Մայրս կաղոթեր և ներողություն կաղերսեր անաստված հորս համար:

Հայրս 30 տարիեւ ի վեր պատարազի ձայն չէր լսած: Ես
կամաց-կամաց կը բարձրանայի և կեղոնի մոմն ալ կը կպցնեի:

Մայրի'կ, մայրի'կ, վեր եկուր:

Սո՞ւս, սուս, վա՞ր իշիր:

Ես կիշնայի վար: Մայրս արտորանոք վերնատուն կերթար, որպեսզի տերտերը
շտեսներ, թե ինք դասն էր եկեր: Երբ տուն երթալե ետք պատճառը կը հարցնեի
տաճարը չելելուն՝ ըսավ.

Գառնուկս, կնիկներուն համար մեղք է խորան ելլելը:

Չեի հասկնար հիմակվան պես Եվայի պատմոթյան նշանակությունը:

Ճրագալույծ գիշեր մը զիս բարձրացուցին վերնատուն: Այդ սրբազան լոռոթյան և
մութին մեջ մենակ ես էի, որ վերնատունը կանգնած, սպիտակ շապիկ հազած,
դալկահար մոմ մը կը բռնեի ձեռքիս մեջ:

Քրիստոս հարյավ ի մեռելոց... իմ երգս բոլորը ծունկի բերել տվավ:

Վերջեն լսեցի, որ մայրս կարտասվե եղեր, իհարկե հորս համար, որ իր
ամենապզտիկ մանկան երգը չէր լսած:

Բ

Անզամ մը գյուղեն մեկ քանի հաստ խնձոր բերած էին, խոշոր և կաս-կարմիր: Եռք
մեր թևերուն վրա կը փայլեցնեինք, պատկերնիս մեջը կերևնար: Մայրս հյուրերու
համար պահած էր այդ մեկ քանի խնձորները:

Ես գողցա երկու հատը և տարի մեր դրացի փոքրիկ Զարուին տալու: Զարուն
երկար, խարտյաշ մազերով, կապույտ աչքերով, կարմիր շրթունքներով և
այտերով աղջիկ մըն էր:

Ես տղոց հետ չէի ուզեր խաղալ, միշտ Զարուն էր իմ խաղակիցը: Զարուի
ծնողները մեկ-երկու օրեն Պոլիս պիտի երթային, տանելով իրենց հետ Զարուն

ալ:

Տրոռում, շատ տրոռում էի . . .

Ուզեցի Զարուին վերջին շնորհը մը ընել և գողացա այդ խնձորները:

Բոնեցի Զարուին, քաշեցի, բերի մեր պարտեզը, տարի վարդի թուփերուն ետին,
զլտորելով եկավ ետևես, երնջի այդ

աղվորիկ, լեզու չունեցող ձագը: Նստեցուցի խոտերուն վրա, գրպանես հանեցի
երկու խնձորները և ցուցուցի իրեն:

Յատկեց և ուզեց խլել ձեռքես:

Անմիջապես մեկը գրպանս դրի և մյուսը մոտեցուցի շրթունքներուն:

Զարուն խածնելու եղավ թե չէ՝ ես համբուրեցի զինքը: Ձեռքես չհանեցի խնձորը,
ամեն մեկ խածին համբուրեցի Զարուն: Երբ հատնելու եղավ՝ իր քնքուշ թևը
երկարեց վզիս, մյուս ձեռքով ալ կամացուկ մեկալ խնձորը հանեց գրպանես: Ես
չգիտնալու տվի: Թողուց, որ համբուրեմ այտերը, աչքերը, մազերը... խարտյաշ
մազերը:

Խնձորը առնելեն ետք... փախավ...

Գ

Ներս գացի: Մայրս խոժող դեմքով մոտեցավ ինձ.

ԱՇքդ նայիմ, ըսավ:

Մայրս կրնար աչքերնես մեր հանցանքը գիտնալ: Այն տարիքին կը զարմանայի,
թե ինչպես մայրս կրնար մեր մեղքերը գուշակել՝ միայն աչքերնուս մեջ նայելով:
Հիմա կը հասկնամ թե՝ երբ հանցանք ունենայինք, աչքերնիս չէինք բանար. ա՛յդ
էր մորս մոգական արվեստին զաղտնիքը:

Չբացի աչքերս ոչ թե խնձորի գողության համար, այլ Զարուն համբուրելուս
վախեն:

Եկո՞ւր ինձ հետ աղոքե, որ Աստված ներե մեղքդ, հարեց մայրս:

Գացինք պատշգամբը աղոքելու: Խաչ հանեցի և մտքիս մեջ աղոքեցի.

«Աստված պապա, ոտքդ պազնիմ, մի՛ թողուր, որ Զարուն Պոլիս երթա, ճամբան գայլերը կը փախցնեն զինքը, կամ ծովը կիյնա, Աստվա՛ծ, ի՛նչ կըլլա, Զարուն հնս պահես»:

Սկսա լալ, հեկեկալով լալ... Մայրս կիսատ ձգեց, առավ զիս իր տաքուկ գրկին մեջ.

Մի՛ լար, զառնուկս, մի՛ լար, ըսավ, Աստված կը ներե գողությունդ:

1916 թ.